

**ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔ
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԼԱԳՅԱԶԻ ՄԱՆԻՆԵՐ» ՊՈԵՄՈՒՄ**

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i63.68

Ամփոփում

«Ալազյազի մանիները» ժանրային առումով պոեմի դասական բնութագրմանը չի համապատասխանում, այն ժողովրդական կյանքի քնարական պատում է՝ կազմված առանձին բանաստեղծություններից:

Պոեմում Բսահակյանը կերտում է հայրենի բնության պատկերներ և նրա զավակների կերպարներ, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ, և պոեմի լեզուն էլ բնութագրվում է ժողովրդական կենդանի խոսքին հատուկ բնականությամբ, անմիջականությամբ և ճշտությամբ:

Խոսքի արտակարգ պատկերավորությունը բանաստեղծն ապահովել է պատկերավորության միջոցների օրինակելի կիրառություններով, որը պոեմի գեղարվեստական արժեքներից է:

Ոճաստեղծ դերով աչքի են ընկնում մակդիրները, որոնք նոր և թարմ են և փայլ են տալիս պոեմի լեզվին: Այդպիսին են նաև համեմատությունները և փոխաբերությունները, որոնք հաճախ կրում են ժողովրդի մտածողության կնիքը: Ուշագրավ և արժեքավոր են նաև Վարպետի կերտած զուգադրությունները, չափազանցությունները, հակադրությունները: Սրանց համատեղ գործածությունը մեծ հմտություն է պահանջում, որպեսզի անհարկի կուտակում չառաջանա, բայց նաև հարազատ լինի ժողովրդական լեզվամտածողությանը: Բսահակյանը հասել է այդպիսի կատարելության, և դա է առիթ տվել ուսումնասիրողին՝ անելու ճիշտ հետևություն. «Լեզվի հարստությամբ Բսահակյանն անգերազանցելի է մեր պոեզիայի մեջ» (1):

Բանալի բառեր և արտահայտություններ. ժողովրդական կյանք, մտածողություն և հույզ, խոսքի գեղագիտություն, բնություն, պատկեր, մարդ:

Ներածություն

Պատկերավոր մտածողությունը հատկապես գեղարվեստական խոսքին ներկայացվող կարևորագույն պահանջ է, ավելի ստույգ՝ խոսքի արժանիք, որն ապահովվում է բազմազան ու բազմաթիվ միջոցներով: Դրանցից մեկը իրականությունը՝ պատկերվող առարկան, երևույթը,

գեղագիտորեն արժևորող խոսքի պատկերավորության միջոցների կիրառությունն է, այսինքն՝ բառի փոխաբերական իմաստի հնարավորությունը գործածելը: Բառերի փոխաբերական գործածությունների դերը իրականությունը գեղարվեստորեն ներկայացնելն է, խոսքին գրավչություն և հուզականություն հաղորդելը, որոնցով այն ներագրում է ընթերցողի վրա, թողնում տպավորություն: Տպավորություն թողնելը գեղարվեստական լեզվի ոչ միայն արժանիքը, այլև նպատակադրումն է: Բիարկե, խոսքը տպավորիչ ու ազդեցիկ է, հիացմունք ու գեղագիտական ապրումներ է հարուցում միայն այն ժամանակ, երբ կրում է անհատական լեզվամտածողության կնիքը, և ստեղծվում է գեղարվեստական իրականության տիպական պատկեր: Խոսքին գեղագիտական արժեք հաղորդելու, այն գեղարվեստականացնելու գործում մեծ դեր ունեն դիպուկ, ճաշակով կատարված համեմատությունները, որոնք օժտված են ընթերցողին մղելու իրականությունն ավելի խորագնի դիտելու առանձնահատկությամբ:

Խոսքի բանաստեղծականացման հարցում անգերազանցելի արժեք ունեն մակդիրները, փոխաբերությունները և այլ գեղարվեստական միջոցներ: Սրանց հատկապես համատեղ գործածությունները, որոնցով ապահովվում է գեղագիտական մթնոլորտ, պահանջում են հմտություն և վարպետություն, գեղարվեստական խոսքին ներկայացվող պահանջների զգացողություն: Այսպես է ստեղծվում անհրաժեշտ ոճական միասնությունը:

Մեթոդաբանությունը

Ներկա հոդվածում հետազոտությունը և ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք համալիր քննության, վերլուծության և համադրման մեթոդներ:

Քննարկում

«Ալազյազի մանիներ» պոեմը ժանրային առումով պոեմի բնորոշ դրսևորում չէ, ժողովրդական կյանքի քնարական պատում է, «կյանքի ու սիրո հեքիաթի» անվերջ հյուսվող տարբերակներ, պատումներ, որոնք պոեմ են դառնում, կառուցվածքորեն ամբողջանում են «տարբեր տրամադրություններ ներդաշնակ միասնության մեջ համադրելու եղանակով»: Գրականագետը ճիշտ է նկատում, «թե՛ դժվար է ասել՝ դա տեսլացած կյանք, թե՛ նյութական տեսիլ» է (3)՝ բոլոր դեպքերում կենդանագրված այնպիսի գեղարվեստական խոսքով, որը, իրոք, «մտածողության ու հույզի արվեստավոր ու գեղեցիկ արտահայտություն է» (4): Խոսքի այս արժանիքներով պոեմի լեզուն կատարում է գեղարվեստական երկի կարևորագույն առաքելությունը՝ ընթերցողին տրամադրություն և հույզ հաղորդելը, նաև գեղագիտական զգացողություններ պարգևելը: Այս դեպքում արծարծվում են արդեն խոսքի

գեղագիտության, գրողի վարպետության, գեղարվեստական խոսքի՝ միայն տվյալ ստեղծագործողին, նույնիսկ տվյալ երկին բնորոշ առանձնահատկությունների հարցեր:

«Մանիներում» բնության պատկերների և մարդկային ապրումների փոխներթափանցումներով Իսահակյանը կերտել է հայրենի հարազատ եզերքի և նրա բնակչի ներդաշնակ, միմյանցից սերող, միմյանց ամբողջացնող պատկեր-կերպարներ՝ գործածելով պատկերավորման, արտահայտչական բազմաթիվ միջոցներ ու հնարքներ այնպիսի վարպետությամբ, որ վերջիններս կարծես եկել-հանգրվանել են այդ տողերում Մանթաշի հովի հետ, Ջարոյի երգից պոկվել են հնչյուններ ու գույներ, դարձել հայրենի բնության պատկեր ու մեղեդի:

Բոլորին է հայտնի **մակդիրի** ոճաստեղծ դերը գեղարվեստական խոսքում, և կարծես բավական է ասել, թե ճիշտ ընտրված մակդիրով տրվում է երևույթի բանաստեղծական բնութագիրը, նաև արտահայտվում է հեղինակի վերաբերմունքը: Սակայն դիտարկենք «սիրուն» Ջարոյին ներկայացնող մի քանի մակդիր, այսպես՝ Ջարոյի աչքերը . «Ձեր թովչանքին չեմ դիմանա, - **Ծավի աչքե ր, ծով աչքե**» (2), և «Քու **աչերդ՝ պայծառ աղբյուր...** Քան զով **երկինք ջինջ ու մաքուր**»: Այո՛, Ջարոն կապուտաչա գեղեցկուհի է եղել, և առաջին օրինակի մակդիրներն ինչ-որ տեղ անվանողական արժեք ունեն, միայն թե այդքան կրկնվող **ծով**-ը այլ է **ծավի**-ի ուղեկցությամբ: Սակայն երկրորդ օրինակին ուղեկցող համեմատությունը, որով բացահայտվում են **պայծառ աղբյուր** աչքերի առնչությունները **ջինջ ու մաքուր** երկնքի հետ, ներկայացնում է **եղնիկ աղջիկ** էությունը, և հասկանալի են դառնում այդ աչքերից ծնված /«Ուրկից սերդ կը ծագե»/ սիրո առաջացրած հույզի չափը, ապրումների վեհությունը: Անհասանելին, անընդգրկելին /երկինքը/ համեմատության մեջ դնելը միայն բացարձակ մեծերին տրված շնորհ է: Այս խորքի վրա համոզիչ է դառնում Ջարոյի «լույս-աչերի» (2), «շող-մատների», «վարդ-մատների» (2) հարուցած տրամադրությունը, և հասկանալի է, թե մակդիրն ինչու այլ՝ հզոր հնչերանգ է ստանում. «Քո աչերդդ՝ **հրեղեն ծով**, Ծովերի պես մազեր ունիս. Սիրտս՝ նավակ, սերդդ՝ խենթ հով, Հովերի պես նազեր ունիս» (2): Ծանոթ են գործածված փոխաբերացված բառերը, սակայն նրանք լրացուցիչ փայլ ու վսեմություն են ստացել Մեծի ապրած զգացմունքը կրելով: Փաստորեն մակդիրների ճարտար գործածությամբ Իսահակյանը կերտել է Ջարոյի կերպարը և իրենց սիրո հեքիաթը: Խոսքին արտահայտչականություն և պատկերավորություն հաղորդող գեղարվեստական միջոցները՝ **համեմատությունը, զուգադրությունը, զուգապատկությունը**, ապա նաև առկա **գեղյումը**, փոխաբերական խոսքային մթնոլորտը, բացահայտում են **հրեղեն ծով**-ի, **խենթ հով**-ի հարուցած զգացմունքների տարափը սիրահար բանաստեղծի

հոգում: Ընդհանրապես «Մանիների» հերոսներն իրենց միջավայրով դիպուկ ու տպավորիչ նախ մակդիրների միջոցով են ներկայացվում, իսկ դրանք արտահայտությամբ և շարադասությամբ տարբեր են և բազմազան. «Թիթեռներդ՝ հուր-հրեղեն Թռչող-ճախրող ծաղիկներ» (2), այդպես էլ՝ ծիրանավառ թագուհի, գմբուխտեղեն թասեր, վարդափթիթ լանջ, աստղե պսակ, ուռենի՝ լավկան, տրտում, գառ երագ, սեզ ժայռեր, վառ վարդեր, նաև՝ թափառական ամպեր, ճամփորդող քամի, աղբյուրներ անապակ աննախադեպ գուգորդումները: Հուզականությամբ օժտված են հատկապես ժողովրդական բառուբանով արտահայտված մակդիրները, ինչպես՝ պարզուկ սրինգ, նուռ շրթունք, նուշ թշեր, կանաչ-կտրիճ տղա, շարմաղ Ջարո, թուր-թուր ունքեր և այլն:

Լսենք, թե որքան բնական ու հուզական է սիրուն տրված մակդիրը բանաստղում.. «Երկնքի ամպը իր լեռը ունի, Հանգստի մի այր՝ ճամփորդող քամին, Ո՛ւր տանիմ, ասա՛, **խեղճ** սերս հիմի, Դուռդ բաց արա՛, մեռնիմ քու շեմին...

» (2):

Հարցման միջոցով ստեղծվել է **բացասող գուգահեռականության** հնարք, որի շնորհիվ սիրուն տրված **խեղճ** մակդիրն օժտված է աննախադեպ բովանդակությամբ: Իմաստային-ռճական առումով անգնահատելի է գոյական մակդիրների դերը, ինչպես՝ «Մեր մակույկը հովի հնով Երագի մեջ կսահի, Ալիքների շուշան թևով Լճի վրա սնդուսի» (22): Նոր ու տպավորիչ է **ալիքի թև** կապակցությունը, նաև **շուշան**-ի գուգորդումը: Նման գուգորդումները հաճախադեպ են, ինչպես՝ աչքերդ՝ հուր ու սաթի (2), գոտի գոհարի (2), սիրու հեքիաթը (2) և այլն, սակայն հեղինակային լեզվամտածողության եզակի նմուշ է՝ «Ի՛մ հազար սեր սիրեկան» (2) կապակցությունը: Նվիրումի և սիրո ինքնաբերական և եզակի դրսևորում: Այդպիսի սիրո ցավն էլ համահունչ արձագանք ունի . ընտրված մակդիրը դարձյալ կապակցությամբ է արտահայտված և աննախադեպ է. «Ու մի տղա՝ կրծքի վրա **Սիրով զարկված** գլուխը կախ՝... Երգեց մեղմիկ մի տխուր տաղ» (2): «Սիրով զարկված» գլուխ . լեզվամտածողության գոհար է: **Մեղմիկ** և **տխուր** մակդիրները նպաստում են համապատասխան մթնոլորտի ստեղծմանը:

Համեմատությունը՝ որպես պատկերավորության միջոց, անհամեմատ լայն կիրառություն ունի խոսքում, հատկապես՝ գեղարվեստական խոսքում, սակայն միայն նոր ասելիքով: Բասակյանը այս միջոցը հաճախադեպ է գործածել ոչ միայն ռճաստեղծ արժեքով: «Մանիներում» դրանք ժողովրդական լեզվամտածողության բնական միջավայր են ստեղծում պարզ ու ծանոթ երևույթների համադրումներով, որոնք շնորհալի գրչով նաև հուզական են դարձնում խոսքը և խորացնում **գեղագիտական զգացողությունը**: Ահա կարոտ ծնող պարզ ու ծանոթ մի պատկեր.

«Արևամուտին բուխարիկներեն Իրիկվա նման խաղաղ ծուխ կելներ» (2), Այդպես էլ՝ «Ու աղավնի կթոցնեն ձյունների պես սպիտակ» (2) և այլն:

Վերհուշի ապրումն անթարգմանելի զգացողություններ է ծնում և անսովորություն հաղորդում արդեն ծանոթին: Պարզ ու հուզական են բնության պատկերների և այդ եզերքին հարազատ հոգիների զուգորդումներով բոլոր համեմատությունները. «Մի հրաշք աղջիկ՝ մազերը ոսկի, Աչքերը խորունկ՝ նման լճակի» (2): Ահա ժողովրդական լեզվի գրավիչ մի պատկեր-համեմատություն. «Հիմի հոգնել, եղնիկի պես, թնիս տակին կուչ է եկել» (2):

Նաև գեղեցիկ մտորումներ հարուցող մի համեմատություն. «Ու համբուրեց ինձ մեղմով, Այնպե՛ս մեղմով, սիրով լի. Ասես, դեմքիս վրայով Սահեց թևը բլբուլի» (2): «Մեղմով» բառը բոլորովին նոր է կիրառությամբ, և միջնադարյան սիրո ասպետ թռչնի թևի հետ համբույրի համեմատությունը խոսքը դարձնում է բանաստեղծականորեն անմրցելի: Հայրենի բնանկարը կերտվում է ծավալուն և պատկերավոր համեմատություններով. «Զմրուխտեղեն թասերի մեջ, Ինչպես ոսկի գինիներ, Կը շողշողան ու կըրտան պեժ Ակն-աղբյուրներ, լճակներ» (2), նաև «Արագածը իրար վրա Իր պերճ գորգերն է փռել. Պերճ գորգերով քար ու քոռ Քյոշքերի պես զառ-զուզել» (2), մինչդեռ հեքիաթականը «Շուրջդ անուշ շատրվաններ, հազար-վարդ, Բլբուլի պես կը գեղգեղեն նաժիշտներ» (2): Այստեղ էլ ազդու է անհրականը, որ հակադրվում է ծանոթին:

Գեղարվեստական հետևյալ անզուգական պատկերի շրջանակներում համադրված միջոցները՝ չափազանցություն, փոխաբերություն, համեմատություն, մեծ վարպետությամբ՝ քիչ բառերով, սեղմ խոսքով, տրված է հոգեվիճակի, սիրո և հիացմունքի ապրումների վեհությունը. «Վառ հեքիաթ է չորս դիս փոված, Գինու գետեր կը հոսին, համբույրներդ՝ գինով վառված՝ Բլբուլի պես կը խոսին» (2): Սիրուն Զարոն, որ հարուցել է խենթացնող սեր, չափազանցական համեմատության մեջ է մտնում գեր-հզորի՝ արևի հետ. «Արևի պես, սիրուն Զարոս, Շափաղ տալով դուն կուգաս» (2): Այդ սքանչացումն անցողիկ չէ, և Զարոն անհամեմատելի է իր հմայքով. «Հուր վարդերեն հարյուր անգամ Շրթիդ այլ բոց ունի. Վառ վարդերեն հազար անգամ Շրթիդ լալը բույր ունի» (2) և կամ «Եղնիկ Զարոն ձորը կուգա՝ Օիլ-ծաղկունանց շողք տալով» (2): Կերպավորման արվեստի, բանաստեղծական խոսքին գեղեցկություն, պատկերակերտման կարևոր գործառնություն և հուզականություն հաղորդելու գործում փոխաբերությունն անհամեմատելի արժեք ունի: Այն ծառայում է գեղարվեստական խոսքի առաջնային դերի՝ գեղագիտական զգացողություն պատճառելու, ազդեցություն թողնելու ապահովմանը:

Շնչավորված և անձնավորված մայր բնությունը և նրա լուսեղեն մասնիկ սիրահարը անջնջելի տպավորություն են թողնում ընթերցողի վրա և հոգին ավետափ լցնում մի անբացատրելի կարոտով, ահա՝ «Նուռ շրթունքիդ, նուշ թշերիդ Շավղը ջուրը կը պաչէ»։ որևէ հնչյուն չի կարելի տեղաշարժել։ Կենդանացած մայր բնությունը իրական կյանքին և մարդկանց ռոմանտիկական շունչ է հաղորդում և դարձնում հեքիաթական, ինչպես՝ «Փետուրները պայծառ ոսկով՝ Հավքերն ուրախ ծափ կուտան Ու կարոտի, սիրու խոսքով Իրար քնքո ւշ ձեն կուտան» (2), կամ՝ «-Կոպերն իջան լուռ գիշերվա, Սարին, ձորին բերին քուն. Դո՛ւ լույս-արև հոգուս վրա, Դո՛ւ միշտ արթուն իմ հոգում» (2)։ Գիշերի նման պատկերի թերևս չես հանդիպի որևէ այլ խոսքում։ Բիարկե, հույզն ուժգնանում է հրաշալի կերտված հակադրությամբ։ **Փոխաբերության, հակադրության, ճարտասանական հարցի** համադրումներով հմտորեն կերտված է գեղեցկության կերպարը՝ թողած տպավորության միջոցով, ինչպես՝ «-Չքնա՛ղ աղջիկ, դու վիռ լի ես, թե փերի, Որ եղնիկով որսկանի սիրտ կը որսաս» (2)։ Գեղագիտական արժեքը, անշուշտ, նաև հակիրճության մեջ է։ Ահա ևս մի հրաշալի պատկեր՝ տարբեր միջոցների զուգորդումներով՝ «Նագիկ հավքերն անուշ կերգեն. Ո՛վ կիմանա էդ լեզուն. Ով լացել է սիրու վերքեն, Թռչուն դառել երագուն» (2)։

Խոստուն և պատկերավոր է այս հակադրությամբ. «Ինքը՝ հրաշք-գեղեցիկ, Սիրտը՝ կարծր քարի փերթ» (2)։

Հայրենի եզերքը կենդանում է անձնավորմամբ, ինչպես՝ «Հուր-հավքերդ թներն արծաթ, Կուռցներդ՝ լալ-մարջան, Ինձ կը պատմեն ոսկի հեքիաթ՝ Աշխարհներեն դյութական» (2), նաև՝ «Ու անտեղյակ մահին-չարին՝ Հավքերն ուրախ սեր կերգեն. Հարբած կերգեն իրենց յարին, Չեն կշտանար երգելեն» (2) և այլն։ Հնարավոր չէ ինչպես ընտրություն կատարել, այնպես էլ տարանջատել բնությունն ու զավակին։ Սա բանահյուսական արվեստի գլուխգործոց է։

Ցավը թե ուրախությունը, սերը, սպասումն ու կարոտը բնության զավակը մայր բնությանն է վստահում։ Ահա կրկնության գեղարվեստական հնարանքով այդ կապի մի գեղեցիկ օրինակ՝ «Մեր բաղի խաս բլրովին Տըվի կարոտս՝ տանի, Որ երգով տանի՝ տանի՝ Մրտով սիրած իմ յարին.... Հեռո՛ւ, հեռո՛ւ իմ յարին» (2)։

Նկատենք. ժողովրդի հոգեբանության և լեզվամտածողության գիտակը հաճախ է դիմում կրկնության միջոցին իրեն հետաքրքրող միտքն ընդգծելու համար, ինչպես՝ «Սիրելի՛ս, մի հատիկ ես, Աշխարհի մեջ մի մի հատիկ ես /աստիճանավորում, ընդլայնում է գաղափարը/, Ես մեռնիմ՝ քեզի մատաղ, Դուն ծաղկիր՝ մի հատիկ ես» (2)։ Մաղթանք –նվիրումի խոսքն ավելի է ընդգծում զգացմունքի խորքը։ Սակայն պոեմի լեզվում առկա

կրկնություններն ընդհանրապես լեզվին բանաստեղծականություն հաղորդող անուրանալի արժեքով են օժտված և երգերին հաղորդում են տարածայնության և ժամանակային անընդգրկելիության քնարական զգացողություն՝ խորացնելով հուզականությունը, դրանով էլ՝ գեղագիտական զգացողությունը, օրինակ՝ «Միրեն ց, սիրեն ց ու մեռավ՝ Վառված սիրու հրդեհով», «Եկա ն, եկա ն կարոտով, Եկողն էլ ետ չդառավ» (2): Ինչպես իր՝ տիեզերախոհ բանաստեղծի քնարին առնչվողները...

Նման շքեղություններն են առիթ տվել գրականագետին՝ անելու ճշգրիտ հետևություն. «Լեզվի հարստությամբ Իսահակյանն անգերազանցելի է մեր պոեզիայի մեջ» (1):

Եզրակացություններ

«Ալազգազի մանիներ» պոեմի լեզուն բանաստեղծականացնող լեզվատարրերի շարքում մեծ դեր և նշանակություն ունեն լեզվի պատկերավորման միջոցների՝ համեմատության, մակդիրի, փոխաբերության, անձնավորման յուրահատուկ դրսևորումները, որոնք կրում են Ավ. Իսահակյանի բանաստեղծության առաջին շրջանի՝ ժողովրդաշունչ քնարերգության լեզվառձական առանձնահատկությունների կնիքը, ունեն վարակիչ անմիջականություն, օժտված են հուզականությամբ, թողնում են անջնջելի տպավորություն: Այդպիսիք են նաև կերտված համադրությունները, չափազանցություններն ու գուգադրությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ինճիկյան Ա. (1977), Ավետիք Իսահակյան, «Սովետական գրող» հրատ., Երևան, 257 էջ:
2. Իսահակյան Ավ. (1958), Երկեր, հ. 2, Հայպետհրատ, Երևան, 308 էջ:
3. Հովհաննիսյան Գ. (1975), Ավետիք Իսահակյան, «Հայաստան» հրատ., Երևան, 255 էջ:
4. Պողոսյան Պ. (1991), Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ 2, Երևանի պետական համալսարանի հրատ., Երևան, 424 էջ:
5. Պողոսյան Պ. (1975), Ոճագիտական ըմբռնումների ծագումն ու զարգացումը Հին Հունաստանում և Հռոմում, Երևանի պետական համալսարանի հրատ., Երևան, 172 էջ:

REFERENCES

1. Inchikyan A. (1977), Avetik Isahakyan, "Soviet writer" publishing house, Yerevan, p. 257.

2. Isahakyan Av. (1958), Yerker, no. 2, Haypethrat, Yerevan, p. 308.
3. Hovhannisyan G. (1975), Avetik Isahakyan, "Armenia" publishing house, Yerevan. p. 255.
4. Poghosyan P. (1991), Fundamentals of speech culture and stylistics 2, Yerevan State University Publishing House, Yerevan, p. 424.
5. Poghosyan P. (1975), The Origin and Development of Stylistic Understandings in Ancient Greece and Rome, Yerevan State University Publishing House, Yerevan, p.172.

Мариета Хачатрян

**Эстетическая ценность художественных средств в поэме Ав. Исаакяна
«Песни Алагиаза // Алагязи манинер».**

Заключение

Ключевые слова и выражения: Народная жизнь, мышление и эмоция, эстетика речи, природа, образ, человек.

«Песни Алагиаза // Алагязи манинер» не соответствует классическому описанию поэмы в жанровом отношении, это лирическая история народной жизни, сложенная из отдельных стихотворений.

Образное мышление является особенно важным требованием художественной речи, точнее, достоинством речи, которое обеспечивается различными и многочисленными средствами.

В поэме Исаакян создает образы родной природы и характеры ее детей, которые тесно связаны между собой, а язык поэмы характеризуется естественностью, прямоотой и точностью, свойственными живой речи народа.

Поэт обеспечил неординарную образность речи образцовым использованием образности, что составляет одну из художественных ценностей поэмы.

Эпитеты, которые являются новыми и свежими и придают блеск языку стихотворения, выделяются своей стилистической ролью. Таковы же сравнения и метафоры, которые часто носят на себе печать народной мысли.

Сопоставления, преувеличения, контрасты, созданные Мастером, также замечательны и ценны. Совместное их использование требует большого мастерства, чтобы не создавать лишнего накопления, но и быть близким к просторечию.

Такого совершенства достиг Исаакян, и это дало исследователю возможность сделать правильный вывод. «По богатству языка Исаакян непревзойден в нашей поэзии» (1).

Среди языковых элементов, поэтизирующих язык стихотворения «Алагязи Манинер», особыми проявлениями языковой факторизации

являются средства сравнения, наречия, метафоры, персонификации, которые несет в себе Отпечаток языковых и стилистических особенностей первого периода поэмы Ав. Исаакяна.

Marieta Khachatryan

The aesthetic value of artistic means in the poem of Av. Isahakyan

"Songs of Alagiaz // Alagyazi Maniner".

Conclusion

Key words and expressions: Folk life, thinking and emotion, aesthetics of speech, nature, image, person.

"Songs of Alagiaz // Alagyazi Maniner" does not correspond to the classical description of the poem in terms of genre, it is a lyrical history of folk life, composed of individual poems.

In the poem, Isahakyan creates images of native nature and the characters of her children, which are closely interconnected, and the language of the poem is characterized by naturalness, directness and accuracy, characteristic of the living speech of the people.

The poet provided an extraordinary imagery of speech with an exemplary use of imagery, which is one of the artistic values of the poem.

Epithets that are new and fresh and that add shine to the language of the poem stand out for their stylistic role. Such are the comparisons and metaphors that often bear the stamp of popular thought.

Comparisons, exaggerations, contrasts created by the Master are also wonderful and valuable. Their joint use requires great skill in order not to create unnecessary accumulation, but also to be close to vernacular.

Isahakyan achieved such perfection, and this gave the researcher the opportunity to draw the right conclusion. "By the richness of the language, Isahakyan is unsurpassed in our poetry (1)".

Մարիետա Խաչատրյան – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, լեզվի տարբերակային ձևեր, հատկապես՝ գեղարվեստական լեզու, բարբառագիտություն, լեզվի դասավանդման մեթոդիկա: Հեղինակ է շուրջ քառասուն գիտամեթոդական հոդվածների և մեթոդական ուղեցույցի:
marieta-20@mail.ru

Мариета Хачатрян – кандидат филологических наук, доцент Ширакский Государственный Университет имени М. Налбандяна. Научные интересы: современный армянский язык, вариативные формы языка, особенно художественный язык, диалектология, методика преподавания языка. Автор около сорока научно-методических статей и методических указаний. Готовится к изданию монография.
marieta-20@mail.ru

Marieta Khachatryan - candidate of philological sciences, associate professor Shirak State University after M. Nalbandyan Scientific interests: modern Armenian language, variant forms of the language, especially artistic language, dialectology, language teaching methodology. Author of about forty scientific-methodical articles and methodological guidelines. One monograph is being prepared for publication.
marieta-20@mail.ru

*Խմբագրություն է ուղարկվել 27. 10. 2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 07. 11. 2023թ.
Հրապարակման է ներկայացվել 10.01.2024թ.*